ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՀԱՅԿ ԵՆԳԻԲԱՐՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՄԱՐՏԻ 20-Ը ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ժամանակահատվածում կատարել եմ հետևյալ աշխատանքները.

1. **Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման հետ կապված աշխատանքներ, մասնավորապես.**

- Բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման շրջանակում համակարգել եմ համապատասխան աշխատանքները, աջակցություն ցուցաբերել ծրագրի մշակումը իրականացնող «Ամերիա» ՓԲԸ-ի թիմին: Նախաձեռնվել և կազմակերպվել են հանդիպումներ ծրագրի մշակման թիմի և շահագրգիռ կողմերի միջև՝ ապահովելով անհրաժեշտ տեղեկատվության հասանելիությունը և նպաստելով աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը, ինչպես նաև որոշումների օպերատիվ կայացմանը:

- Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են մի շարք հանդիպումներ և քննարկումներ ծրագրի մշակման թիմի, նախարարության պատասխանատուների, շահագրգիռ պետական մարմինների ներկայացուցիչների և այլ կողմերի մասնակցությամբ: Քննարկվել են ռազմավարական ծրագրի տեսլականը, արդյունքային շրջանակը և գործողությունների ծրագիրը: Ստացված դիտարկումների և առաջարկությունների հիման վրա շարունակվում է ռազմավարական ծրագրի նախագծի լրամշակումը:

- Հաշվետու ժամանակահատվածում ներգրավված եմ եղել ՀՀ փոխվարչապետի գրասենյակի համակարգմամբ ձևավորված Տնտեսական փոխակերպման և կայուն զարգացման ռազմավարության մշակման աշխատանքային խմբի աշխատանքներում: Մասնակցել եմ խմբի աշխատանքային հանդիպումներին և ներկայացրել

առաջարկություններ ռազմավարության տեսլականի և արդյունքային շրջանակի վերաբերյալ:

2. **«Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի կիրարկումն ապահովող աշխատանքներ, մասնավորապես.**

- Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության թիմի հետ համագործակցությամբ համակարգել եմ աշխատանքները՝ ուղղված 2025 թվականի 3-րդ եռամսյակի բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության ընտրանքային ստուգումներին և աջակցության առցանց հաշվարկի համակարգի կատարելագործմանը: Հանդիսացել եմ նախարարության կոնտակտային անձը՝ ապահովելով Գործակալության ծրագրավորման թիմի և ՊԵԿ աշխատակիցների համար անհրաժեշտ տեղեկատվության, առաջարկությունների, դիտողությունների և պարզաբանումների տրամադրումը:

- Ներկայացրել եմ առաջարկություններ՝ 2026 թվականի հունվարից «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի շրջանակում աշխատանքային միգրանտների համար պետական աջակցության տրամադրման հայտերի ներկայացման գործընթացի և աջակցության ինքնաշխատ հաշվարկման մեխանիզմների վերաբերյալ:

- Ներկայացրել եմ առաջարկություններ օրենքի և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերի փոփոխությունների և լրացումների վերաբերյալ՝ ուղղված կարգավորումների հստակեցմանը, գործընթացների բարելավմանը և թվային օպտիմալացմանը, իրավական բացերի վերացմանը, ինչպես նաև շահագրգիռ կողմերից ստացված առաջարկությունների համակարգված հասցեագրմանը:

3. **Գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների (R&D) աշխատանքները որպես այդպիսին որակելու աշխատանքների գործընթացին աջակցություն.**

- Կատարել եմ շահագրգիռ մարմինների, մասնավորապես, ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հետ համագործակցության ապահովման, R&D աշխատանքները որպես այդպիսին որակելու հայտերի ուսումնասիրման գործընթացի վերաբերյալ շահառուներին համապատասխան տեղեկատվության տրամադրման և այլ աջակցող աշխատանքներ:

4. **Համագործակցություն ոլորտի շահառու ասոցիացիաների և կազմակերպությունների հետ.**

- Հաշվետու ժամանակահատվածում մասնակցել եմ ոլորտի շահառու ասոցիացիաների և կազմակերպությունների հետ մի շարք առերես և առցանց հանդիպումների և քննարկումների:

5. Այլ աշխատանքներ

- Հավաքագրել, մշակել և նախարարության աշխատակիցներին տրամադրել եմ նրանց կողմից պահանջված տեղեկատվությունը:
- Պատասխանել եմ այլ պետական մարմիններից ստացված պաշտոնական գրություններին:
- Պատասխանել եմ ոլորտի կազմակերպությունների և քաղաքացիների կողմից ստացված գրավոր հարցումներին և դիմումներին:
- Պատասխանել եմ շահառու կազմակերպություններից և քաղաքացիներից ստացված հեռախոսազանգերին՝ տրամադրելով անհրաժեշտ խորհրդատվություն:
- Կատարել եմ մի շարք այլ ընթացիկ աշխատանքներ:

ՏԷՋ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ _____ ԼՈՒՍԻՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆ
ստորագրություն

«20» մարտ 2026թ.

Հաշվետու ժամանակաշրջանում կատարած աշխատանքները գնահատում եմ « գերազանց »

_____ ՀԱՅԿ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ
անմիջական ղեկավարի ստորագրություն

«20» մարտ 2026թ.